ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՈՀԾԿՀ-22/2-ՄԱԱՊՁԲ

ք. Երևան «17» 03 2022 թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյանի, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Արմեն Զաքարյան Գագիկի Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Ա. Զաքարյանին, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1852850 (մեկ միլիոն ութ հարյուր հիսուներկու հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Հանրային ծառայությունները	«Արմեն Գագիկի Զաքարյան» Ա/Ձ
կարգավորող հանձնաժողով	ք.Երևան, Դավիթաշեն 2 թաղ. 13 շենք, բն.15
ք.Երևան, Սարյան 22	«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ900011183010	Հ/Հ 1660011461730100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ 20172914
ՀՎՀՀ 02531594	Տնօրեն՝ Արմեն Զաքարյան
Գլխավոր քարտուղար՝ Ա. Սաֆարյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«17» 03 2022թ. կնքված
N ՀԾԿՀ-22/2-ՄԱԱՊՁԲ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ֆիրմային անվանում, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը 2022թ.
1	18141100/1	աշխատանքային ձեռնոցներ	Zajel	Ձեռնոցներ ռետինից I տիպի՝ N 2, N 3 (L չափի), հաստությունը՝ 0,6-0,9 մմ, երկարությունը 300 մմ ոչ պակաս, ըստ ԳՕՍՏ 20010-93:	զույգ	220	4400	20	ք.Երևան, Սարյան 22	5	ապրիլ
										10	հուլիս
										5	հոկտեմբեր
2	19641000/1	պոլիէթիլենային պարկ,աղբի համար	Boob	աղբի պոլիէթիլենային տոպրակներ սև գույնի ըստ ԳՕՍՏ 10354-82 առնվազն 5 կգ. դիմացկունությամբ:	հատ	8	208000	26000		2000	մարտ
										3000	ապրիլ
										4500	հուլիս
										16500	հոկտեմբեր
3	31442000/1	մարտկոց AA տեսակի	Energizer	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, 1.5 վ, AA ալկալիական, առնվազն մեկ տարվա երաշխիք	հատ	380	38000	100		40	ապրիլ
										30	հուլիս
										30	հոկտեմբեր
4	31512360/1	լուսարձակներ	Bestlighting	Լուսարձակ՝ 150 Վտ, 220 Վ: Փակ պաշտպանիչ ջերմադիմացկուն ապակիով, դրոսելային միացման, I P 53/IP23, լուսարձակի վրա համանուն ֆիրմայի նշագրմամբ: ԳՕՍՏ 17516.1-90	հատ	15600	46800	3		3	հուլիս
5	31521500/1	առաստաղի լուսավորման սարքեր	Bestlighting	Հզորություն 40 վտ, լույսի գույնը սպիտակ, իրանի գույնը՝ արծաթագույն, լուսային հոսք՝ 3200 լմ, Լարումը՝ 220Վ, , չափսեր՝ 595*595*11 մմ, լեդ՝ 120 պցս, սմդ 5630: Առաստաղի մեջ ներկառուցվող Երաշխիքային ժամկետ 2 տարի:	հատ	6950	556000	80		33	ապրիլ
										47	հոկտեմբեր

6	31531300/1	տնտեսող լամպեր	Bestlighting	ԼԷԴ լամպեր՝ հզորություն առնվազն 7 վտ, լույսի գույնը դեղին, տրամագիծը 90 մմ, երկարությունը 110 մմ բարձրությունը 50մմ: Առաստաղի մեջ ներկառուցվող: Երաշխիքային ժամկետ - 2 տարի:	հատ	1800	27000	15		5	ապրիլ
										4	հուլիս
										6	հոկտեմբեր
7	31531710/1	լամպերի դրոսելներ	Mazda	Նախատեսված են Հզորություն 40 վտ, լույսի գույնը սպիտակ, լուսային հոսք՝ 3200 լմ, Լարումը՝ 220Վ, , չափսեր՝ 595*595*11 մմ, լեդ՝ 120 պցս, սմդ 5630: Առաստաղի մեջ ներկառուցվող, առատաղի լուսավորման սարքերի համար, երաշխիքային ժամկետ - 2 տարի:	հատ	2300	23000	10		10	ապրիլ
8	31651400/1	մեկուսիչ ժապավեններ	Vini Tape	Հոսանքի մեկուսացման համար, գլանափաթեթներով պոլիմերային ժապավեն, կապույտ կամ սև գույնի, երկարությունը՝ ոչ պակաս 10մ-ից, լայնությունը՝ ոչ պակաս 18մմ-ից:	հատ	200	1000	5		5	ապրիլ
9	31685000/1	էլեկտրական երկարացման լար	Makel	Չափսը՝ 3տ 3 մ: 110 Ա, 250 Վ միացման մանրակներով: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N 285-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի:	հատ	2200	11000	5		3	ապրիլ
										2	հուլիս
10	33761100/1	զուգարանի թուղթ	Grand Candy	Միաշերտ, երկարությունը առնվազն 65մ, լայնությունը առնվազն 9 սմ: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված	հատ	135	189000	1400		300	մարտ
										340	ապրիլ

				"Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի:						300	հուլիս
										460	հոկտեմբեր
11	39221350/1	մեկանգամյա օգտագործման բաժակներ	Oval plast	Մեկանգամյա օգտագործման ստվարաթղթե բաժակներ՝ սառը և տաք ըմպելիքների համար: Բավարարում են էկոլոգիական բարձր չափանիշներին: Նախատեսված է դիսպենսերների օգտագործման համար:	հատ	11	22000	2000		1000	մարտ
										1000	հուլիս
12	39221420/1	խոզանակներ	Zambak	Ռեզինե հիմքով, ծղոտե ծակույթով 450x750:	հատ	4400	8800	2		1	ապրիլ
										1	հուլիս
13	39221490/1	սպունգներ	Armspoung	Նախատեսված աման լվանալու համար ուղղանկյունաձև երկարությունը 120մմ, լայնությունը 70մմ, հաստությունը 25մմ, մի կողմից երեսպատված արհեստական կտորով:	հատ	250	5000	20		10	ապրիլ
										10	հոկտեմբեր
14	39224342/1	աղբարկղ, մետաղյա	Yalong	գրասենյակային աղբաման սև մետաղյա, կլոր ցանցավոր, ոչ պակաս քան 6լ	հատ	1500	15000	10		5	ապրիլ
										5	հոկտեմբեր
15	39513200/1	թղթե անձեռոցիկ, երկշերտ	Silk Soft	Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, խոնավությունը՝ 7,0%, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի:	հատ	400	40000	100		30	ապրիլ
										30	հուլիս
										40	հոկտեմբեր
16	39522250/1	փոշու հավաքման կտորներ	Boob	Լաթեր տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից: Նախատեսված կահույքի և պատուհանների	հատ	450	40500	90		30	ապրիլ
										30	հուլիս

				մաքրման համար, չափսերը՝ 40*50սմ:						30	հոկտեմբեր
17	39522330/1	մաքրող կտորներ	Boob	Լաթեր տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից, նախատեսված հատակի մաքրման համար: Չափսերը՝ 80*100սմ:	հատ	600	12000	20		5 10 5	ապրիլ հուլիս հոկտեմբեր
18	39531800/1	գորգեր	Boob	Կավրալինե ծածկույթով և ռեզինե հիմքով, 120x80 չափսի , կողմը 2 մ ռեզինե, գույնը մոխրագույն:	քմ	6500	13000	2		1 1	ապրիլ հոկտեմբեր
19	39811300/1	հոտազերծիչ,օդի	Tango	Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակուումային բալոնիկով, թարմ ծաղկային բուրմունքով, Fresh room, Belux:	հատ	1700	85000	50		15 15 20	ապրիլ հուլիս հոկտեմբեր
20	39812410/1	կահույքի փայլեցման միջոց	Polo	Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար. աերոզոլային փաթեթվածքով կամ հեղուկի տարաներով: Յուրաքանչյուրը ոչ պակաս 0,5 լիտրից:	հատ	1000	20000	20		5 10 5	ապրիլ հուլիս հոկտեմբեր
21	39831240/1	մաքրող նյութեր	Lux	Մաքրող փոշի ախտահանող հատկությամբ, յուրաքանչյուր տուփի մեջ 0,5 կգ:	կգ	700	5250	7,5		2.5 3 2	ապրիլ հուլիս հոկտեմբեր
22	39831242/1	լվացքի փոշի, ձեռքով լվանալու համար	Lux	լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն:	կգ	900	4500	5		3 2	ապրիլ հոկտեմբեր
23	39831245/1	օճառ, հեղուկ	Safe	Ձեռքի հեղուկ օճառ. 5լ. տարողությամբ տարաներով:	լիտր	400	80000	200		30 30 55 85	մարտ ապրիլ հուլիս հոկտեմբեր

24	39831273/1	հատակի մաքրման նյութեր	Uplon	Սալահատակ մաքրող, լվացող և ախտահանող մածուկ: Չշերտավորվող մածկանման զանգված դեղնականաչավուն երանգի: Օգտագործված հոտավորիչի հոտով: Քլորի թույլ հոտով: Ջրում չլուծվող մնացորդի զանգվածային մասը՝ 45%-ից ոչ պակաս, ակտիվ քլորի զանգվածային մասը՝ 2.5%-ից ոչ պակաս: 0.5 լիտրանոց տարաներով:	լիտր	1250	12500	10		4	ապրիլ
										3	հուլիս
										3	հոկտեմբեր
25	39831273/2	հատակի մաքրման նյութեր	Uplon	Լամինատ մաքրող, լվացող և ախտահանող մածուկ: Չշերտավորվող մածկանման զանգված դեղնականաչավուն երանգի: Օգտագործված հոտավորիչի հոտով: Քլորի թույլ հոտով: Ջրում չլուծվող մնացորդի զանգվածային մասը՝ 45%-ից ոչ պակաս, ակտիվ քլորի զանգվածային մասը՝ 2.5%-ից ոչ պակաս: 1 լիտրանոց տարաներով:	լիտր	1250	6250	5		3	ապրիլ
										2	հուլիս
26	39831276/1	զուգարանների մաքրման նյութեր	Safe	Մաքրող, լվացող և ախտահանող մածուկ: Չշերտավորվող մածկանման զանգված դեղնականաչավուն երանգի: Օգտագործված հոտավորիչի հոտով: Քլորի թույլ հոտով: Ջրում չլուծվող մնացորդի զանգվածային մասը՝ 45 %-ից ոչ պակաս, ակտիվ քլորի զանգվածային մասը՝ 2,5 %-ից ոչ պակաս: 0.75 լիտրանոց տարայով:	լիտր	2300	92000	40		15	ապրիլ
										10	հուլիս
										15	հոկտեմբեր
27	39835000/1	հատակ մաքրելու ձող,պլաստմասե, փայտյա	Boob	Հավաքածու՝ Հատակմաքրիչ ու հատուկ մաքրող դույլ, երկաթե ձող, ձողի երկարությունը՝ 46-100սմ, դույլի բարձ.՝ 20-30սմ, դուլի լայն.՝ 25-35սմ, դույլի երկ.՝ 40-60սմ, երկաթե պտտվող քամիչ, 360 աստիճան պտտվող գլխիկ, , անցք ջուրը թափելու համար	հատ	9500	19000	2		2	հուլիս

28	39836000/1	ավել, սովորական	Արտակ Համբարձումյան Ա/Ձ	Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, երկարությունը՝ 85-90սմ, ավլող մասի լայնքը՝ 35-40սմ:	հատ	1000	10000	10		5	ապրիլ
										5	հոկտեմբեր
29	44111600/1	քառակող սալեր	V-firm	ԱՐՄՍՏՐՈՆԳ (ARMSTRONG) ԲԱՅԿԱԼ տիպի սալեր,Սալի չափսերը 0.6/0.6,Հանքային նյութերից, Էկոլոգիապես մաքուր՝ E1, Խոնավադիմացկուն են՝ 90% Բարձր հրակայունություն՝ KM1	քմ	4000	120000	30		30	հուլիս
30	44411110/1	ջրի ծորակ, 1 փականով	Diablo	1/2 դույմ չափի խողովակներին միացող, խառնիչային տիպի, մեկ թևանի:	հատ	3500	7000	2		1	ապրիլ
										1	հուլիս
31	44411300/2	լվացարաններ	Santeri	Լվացարան 2 դռնանի պատրաստված փայտաթելային սալից (MDF): Չափսերը՝ լայնքը 60 սմ, բարձրությունը 80սմ. խորությունը 40 սմ:	հատ	68000	68000	1		1	մարտ
32	44411742/1	զուգարանակոնքի մեխանիզմ	Nova	Զուգարանակոնքի կոնքաբաչոկի ջրահեռացման մեխանիզմ, ուղղահայաց սեղմվող կոճակով, բարձրությունը՝ 23սմ,լողանի միացումը կողքից:	հատ	1300	9100	7		3	ապրիլ
										4	հուլիս
33	44511120/1	գոգաթիակներ	Javalex	Պատրաստված է ամուր պլաստմասից:: Ունի հատուկ անցք կախիչի համար:	հատ	250	1250	5		5	հուլիս
34	44521120/1	դռան փականներ	Cac	Դռան կողպեք+փական, ներդնովի, բանալիներով, ԳՕՍՏ 5089-2003 արտասահմանյան արտադրության:	հատ	5500	27500	5		3	ապրիլ
										2	հուլիս
35	44521120/2	դռան փականներ	Cac	Դռան փականի կոմպլեկտ, նախատեսված ալյումինե դռների համար, որը ներառում է դռան փական՝ ընդհանուր երկարությունը 240 մմ, ընդհանուր լայնքը 23մմ, միջուկի երկարությունը 172,5մմ, միջուկի լայնքը 35մմ և բռնակ՝ գույնը սպիտակ	հատ	5000	25000	5		3	ապրիլ
										2	հուլիս

* *մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ

ՀՀ Հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով
ք.Երևան, Սարյան 22
ՀՀ900011183010
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02531594
Գլխավոր քարտուղար՝ Ա. Սաֆարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Արմեն Գագիկի Զաքարյան» Ա/Ձ
ք.Երևան, Դավիթաշեն 2 թաղ. 13 շենք, բն. 15
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660011461730100
ՀՎՀՀ 20172914
Տնօրեն՝ Արմեն Զաքարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«17» 03 2022 թ. կնքված
N ՀԾԿՀ-22/2-ՄԱԱՊՁԲ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	18141100/1	աշխատանքային ձեռնոցներ	-	-	-	1100	1100	1100	3300	3300	3300	4400	4400	4400	4400
2	19641000/1	պոլիէթիլենային պարկ.աղբի համար	-	-	16000	40000	40000	40000	76000	76000	76000	208000	208000	208000	208000
3	31442000/1	մարտկոց AA տեսակի	-	-	-	15200	15200	15200	26600	26600	26600	38000	38000	38000	38000
4	31512360/1	լուսարձակներ	-	-	-	-	-	-	46800	46800	46800	46800	46800	46800	46800
5	31521500/1	առաստաղի լուսավորման սարքեր	-	-	-	229350	229350	229350	229350	229350	229350	556000	556000	556000	556000
6	31531300/1	տնտեսող լամպեր	-	-	-	9000	9000	9000	16200	16200	16200	27000	27000	27000	27000
7	31531710/1	լամպերի դրոսելներ	-	-	-	23000	23000	23000	23000	23000	23000	23000	23000	23000	23000
8	31651400/1	մեկուսիչ ժապավեններ	-	-	-	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000
9	31685000/1	էլեկտրական երկարացման լար	-	-	-	6600	6600	6600	11000	11000	11000	11000	11000	11000	11000
10	33761100/1	զուգարանի թուղթ	-	-	40500	86400	86400	86400	126900	126900	126900	189000	189000	189000	189000

11	39221350/1	մեկանգամյա օգտագործման բաժակներ	-	-	11000	11000	11000	11000	22000	22000	22000	22000	22000	22000	22000
12	39221420/1	խոզանակներ	-	-	-	4400	4400	4400	8800	8800	8800	8800	8800	8800	8800
13	39221490/1	սպունգներ	-	-	-	2500	2500	2500	2500	2500	2500	5000	5000	5000	5000
14	39224342/1	աղբարկղ, մետաղյա	-	-	-	7500	7500	7500	7500	7500	7500	15000	15000	15000	15000
15	39513200/1	թղթե անձեռոցիկ, երկշերտ	-	-	-	12000	12000	12000	24000	24000	24000	40000	40000	40000	40000
16	39522250/1	փոշու հավաքման կտորներ	-	-	-	13500	13500	13500	27000	27000	27000	40500	40500	40500	40500
17	39522330/1	մաքրող կտորներ	-	-	-	3000	3000	3000	9000	9000	9000	12000	12000	12000	12000
18	39531800/1	գորգեր	-	-	-	6500	6500	6500	6500	6500	6500	13000	13000	13000	13000
19	39811300/1	հոտազերծիչ,օդի	-	-	-	25500	25500	25500	51000	51000	51000	85000	85000	85000	85000
20	39812410/1	կահույքի փայլեցման միջոց	-	-	-	5000	5000	5000	15000	15000	15000	20000	20000	20000	20000
21	39831240/1	մաքրող նյութեր	-	-	-	1750	1750	1750	3850	3850	3850	5250	5250	5250	5250
22	39831242/1	լվացքի փոշի ձեռքով լվանալու համար	-	-	-	2700	2700	2700	2700	2700	2700	4500	4500	4500	4500
23	39831245/1	օճառ, հեղուկ	-	-	12000	24000	24000	24000	46000	46000	46000	80000	80000	80000	80000
24	39831273/1	հատակի մաքրման նյութեր	-	-	-	5000	5000	5000	8750	8750	8750	12500	12500	12500	12500
25	39831273/2	հատակի մաքրման նյութեր	-	-	-	3750	3750	3750	6250	6250	6250	6250	6250	6250	6250
26	39831276/1	զուգարանների մաքրման նյութեր	-	-	-	34500	34500	34500	57500	57500	57500	92000	92000	92000	92000
27	39835000/1	հատակ մաքրելու ծող,պլաստմասե, փայտյա	-	-	-	-	-	-	19000	19000	19000	19000	19000	19000	19000

28	39836000/1	ավել. սովորական	-	-	-	5000	5000	5000	5000	5000	5000	10000	10000	10000	10000
29	44111600/1	քառակող սալեր	-	-	-	-	-	-	120000	120000	120000	120000	120000	120000	120000
30	44411110/1	ջրի ծորակ, 1 փականով	-	-	-	3500	3500	3500	7000	7000	7000	7000	7000	7000	7000
31	44411300/2	լվացարաններ	-	-	68000	68000	68000	68000	68000	68000	68000	68000	68000	68000	68000
32	44411742/1	զուգարանակոնքի մեխանիզմ	-	-	-	3900	3900	3900	9100	9100	9100	9100	9100	9100	9100
33	44511120/1	գոգաթիակներ	-	-	-	-	-	-	1250	1250	1250	1250	1250	1250	1250
34	44521120/1	դռան փականներ	-	-	-	16500	16500	16500	27500	27500	27500	27500	27500	27500	27500
35	44521120/2	դռան փականներ	-	-	-	15000	15000	15000	25000	25000	25000	25000	25000	25000	25000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով*

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

ՀՀ Հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով
ք.Երևան, Սարյան 22
ՀՀ900011183010
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02531594
Գլխավոր քարտուղար՝ Ա. Սաֆարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Արմեն Գագիկի Զաքարյան» Ա/Ձ
ք,Երևան, Դավիթաշեն 2 թաղ. 13 շենք, բն. 15
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660011461730100
ՀՎՀՀ 20172914
Տնօրեն՝ Արմեն Զաքարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 2022 թ. կնքված
ՀԾԿՀ-22/2-ՄԱԱՊՁԲ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2022 թ. կնքված
ՀԾԿՀ-22/2-ՄԱԱՊՁԲ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն